



Հակոբ Պարոնյան

Պտոյտ մը Պօլսոյ թաղերու մէջ

ԻԷ, ԻԸ, ԻԹ

ԻԷ.

ՔԱՐԹԱԼ

Քանի մը օր առաջ Քարթալ գնացինք տեղւոյն ազգայիններուն վրայօք տեղեկութիւններ հաւաքելու համար. բայց բարեբախտաբար թաղին մէջ մարդ մը չկրցինք գտնել բացի գինեպաններէ, որք գինի կու տային մեզ ամեն անգամ, որ իրենցմէ տեղեկութիւն կ' ուզէինք: Բարեբախտաբար ըսինք, եւ իրաւունք ունինք. վասնզի ինացանք, որ թաղիս Հայերն այգեգործ ըլլալով՝ իրենց այգիները գնացած էին աշխատելու: Երանի թէ բոլոր թաղերու հայերն այգեգործ ըլլային եւ սրճարաններու մէջ խաղերով չանցունէին իրենց թանկագին ժամերը: Ուստի յետ դառնալով՝ Պօլիս անցանք եւ հետեւեալ տեղեկութիւնները քաղեցինք այնպիսի անձէ մը, որ լաւ կճանաչէ Քարթալցին եւ մանաւանդ անոր գինին :

Քարթալցին ըսաւ այս անձը, բնաւ հոգ չըներ, թէ ազգային վարչութիւն կայ, թէ երեսփոխանական ժողովն չըներ, ինչ որ ընել պարտաւոր է, թէ ազգային վարժարանները կհրքերու վառարան դարձած են եւ այլն. վասնզի ազգային վարչութիւն, երեսփոխանական ժողով, ազգային վարժարան բառերն իրեն համար օտարական են, եւ Քարթալցին այն ատեն կսիրէ օտարականն՝ երբոր ուրը դահեկանի ծախէ անոր գինին՝ որ դահեկան արժէք ունի. եւ որովհետեւ Ազգային վարչութիւնն, Երեսփոխանական ժողովն եւ ազգային վարժարանները Քարթալ գնացած չեն գինի առնելու համար, այս պատճառաւ Քարթալցին

անծանօթ մնացած են :

Օտարական մը Քարթալ մտնելուն պէս՝ կշրջապատուի գինեպաններէն, որոնց իրաքանջիւրն իր գինին կգովէ եւ դրացոյնը կը պարսաւէ :

Հիւանդի համար հին գինի ունիւ պատուական, կ'ըսէ մին, առողջի անգամ վնասակար գինի մը կու տայ քեզի :

Մեղանի գինի ունիւ, կպօռայ ուրիշ մը, ցոյց տալով գինի մը, որ ոչ թէ սեղանի, այլ աթոռի գինի չկրնար ըլլալ :

Այսպէս իրենց խօսակցութիւնն կամ այգիի վրայ կդառնայ եւ կամ գինիի վրայ :

Քարթալցին եկեղեցասէր է. ժամկոչը փատ ի ձեռին ամեն առաւօտ դռները կը գարնէ եւ կարթնցնէ բարեպաշտ ժողովուրդն, որ աղօթքին երթայ: Յայտնի չէ, որ փատէ՞ն թէ Աստուծմէ վախնալուն համար եկեղեցի կ'երթան: Ինչ որ ալ ըլլայ՝ սա յայտնի է, որ կսիրեն իրենց եկեղեցին. թող միւս թաղականներն ալ իրենց ժողովուրդներն ոստիկաններու միջոցաւ եկեղեցի բերել տան :

Թաղային վարժարանն, որ շատ տարիներէ ի վեր խեղճ էր, դասատու չունենալուն պատճառաւ՝ այժմ աւելի խեղճ է՝ դասատու մը ունենալուն համար: Վասնզի դասատու մը վարժարանէն ներս մտնելուն պէս՝ վէճն ալ քանի մը շաբաթէն կմտնէ թաղեցիին մէջ: Աս ընդհանուր օրէնք մ'է :

Կայ հոս բարի քահանայ մը, որ շատ տարիներէ ի վեր կարածէ այս հօտն եւ շատ տարիներէ ի վեր գինի կծախէ կաթողիկոսն եթէ Քարթալ գայ՝ շաբաթուան մը մէջ գինոյ վաճառականութեան կսկսի. պանդուխտ քահանայ մ'ալ կայ, որ գիւղին քահանային օգնականն է թէ՛ եկեղեցոյ մասին եւ թէ գինոյ :

Կիներն ալ այրերուն պէս այգիները կ'երթան գործելու: Ասոնք Պօլսոյ միւս թաղերուն թերութիւններէն գերծ են անոր համար, որ այգի մշակելէն ժամանակ չեն կարող գտնել թերութիւն մշակելու: Պարգասէր, աշխատասէր, հաւատարիմ եւ բարի քրիստոնէութիւններ ըլլալու ստիպուած են այս գեղին մէջ :

Հոս կգտնուի այնպիսի հիւր մը, որ իրեն գաւակներն անօթի թողլով՝ ուրիշներուն կիններուն եւ քոյրերուն համար հանգանակութիւն կ'ընէ:

Թաղիս մէջ իբր հարիւր քսան տուն կայ Հայո: Օղափոխութեան համար այլեւայլ թաղերէ հոս կու գան ամառներն եւ տենդ առնելով յետ կդառնան :

Գիւղիս տենդը շատ գլխացաւ կու տայ. երեք օրը անգամ մը կբռնէ, իմ Պտոյտ իս պէս, որ երեք օրը անգամ մը կհրատարակուի ... :

Շատերն ալ գինի առնելու համար կու գան եւ առանց գինովնալու չեն վերադառնար :

ԻԸ.

ԳԱՆՏԻԼԼԻ

Ահա գեղ մը, ուր ոչ քօլերա մտած է եւ ոչ նորածնութիւն :

Հայո քսան եւ հինգ տուն կայ :

Պ. Աբրահամ Այվագեան քանի մը տարիներ առաջ հանգանակութիւն ընելով՝ յաջողած է կանգնել վարժարան մը, որուն մէջ թաղին տղաները միշտ կկարդան այն բաները, զորս կ'աւանդեն մանկավարժներն նախնական դպրոցներու մէջ: Աւելորդ է ըսել, թէ կամ թաղին տղաները բնաւ չեն մեծնար եւ կամ թաղեցին աղքատ լինելով՝ դասատուի մը ամսական վճարելու կարողութիւն չունի: Գիտենք որ այս դպրոցին մէջ տարին քանի մը անգամ պէօրէկ կ'ուտեն աշակերտները, բայց չգիտենք, թէ տարին քանի՛ անգամ ծեծ կ'ուտեն :

Գեղիս ազգայիններն մեծ մասամբ նաւավար են. եկեղեցին կյաճախեն եւ գինետուն բնաւ չեն երթար: Դիտողութեան արժանի է, որ յօգուտ Հայաստանի սովեալներու երեսուն ոսկի գոյացաւ այն նուէրներէն, որք հաւաքուեցան այս գիւղին մէջ :

Կիներն եագմա կբանին եւ ստակ շահելով երբեմն իրենց ամուսիններուն պարտքերն ալ կը վճարեն: Կիներն էին, որ անցեալ տարի կռուեցան

գերեզմանատան մէջ գերեզմանի խնդրոյն համար :

Ասոնք պարգասէր, աշխատասէր եւ հաւատարիմ ըլլալով հանդերձ՝ ազգային զգացում այլ կկրեն. իրենց աղջիկները միշտ ազգային երգեր կերգեն :

Ծեր քահանայ մը ծեր ժամանակէ մ'ի վեր քահանայութիւն կգործէ եւ վեճի մը առիթ տուած չէ բնաւ :

Գիղիս բարձունքէն կմեկնին թնդանօթին այն եօթը ձայներն, զորս երբ լսենք՝ մեր անկողիներէն կցատկենք եւ փողոցը կը վազենք հասկնալու համար, թէ հրդեհն ո՛ր է :

Նաւավարներն երբեմն գիղիս մէջ անանկ կտակներ կ'ընեն ազգին, որ կարծես թէ կատակ կ'ընեն. նաւավարի մը ըրած կտակն մեր ամենէն հարուստներն իսկ չեն ըներ, ուսկից կհետեւի թէ գիղիս մէջ ազգասիրութեան կրակը վառ է միշտ :

Գիղիս օդն եւ ջուրն այնքան առողջարար են, որ եթէ մէկը շաբաթ մը մնայ հոս՝ հետեւեալ շաբթուն կպարտաւորի թիկնաթոռն փոխելու եւ աւելի ընդարձակն գնելու :

ԻԹ.

ԵԷՆԻ ՄԱՀԱԼԷ ՍԱՄԱԹԻՈՅ

Այս թաղը Սամաթիոյ ձագն է եւ ամեն նկատմամբ իւր հօրը կնմանի :

Հոս ալ թաղականի կոիւները պակաս չեն, բայց հրաշագործ Մկրտիչ եպիսկոպոսի շնորհիւ այժմ կոիւները առաջուան պէս մշտնջենական չեն, այլ առժամանակեայ: Վարժարանին գալով՝ յայտնի է, որ թաղային վեճերու մատնուած թաղի մը վարժարանն գոհացուցիչ չկրնար ըլլալ :

Թաղիս այրերն եւ կիներն ազգային զգացում ունին. միջին դասէն ըլլալով՝ շողոքորթութիւն չեն գիտեր եւ ճշմարտութիւնն բարձրաձայն կխոստովանին :

Այրերն օղին կսիրեն, ինչպէս նաեւ գինին. ասոր համար շատերն իրենց հետը լապտեր կ' առնեն, որ եթէ ուշանան գինետան մէջ՝ մութուն չստիպուին երթալ իրենց տուները :

Հրաշագործը հոս հրաշքներ կ' ընէ եւ հիւանդներ կ'բժշկէ :

Օդը լաւ է, բայց թաղեցին օդէն անլի դրամը կսիրէ :